ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Նոյակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում հետևյալ թափուր աշխատատեղերը համալրելու համար:

Մեթոդիստի՝տնօրենի ուսումնական գծով տեղակալի 0.5 դրույքով, ֆիզկուլտուրայի հրահանգչի 0.75 դրույքով, երաժշտության դաստիարակի 0.75 դրույքով, դաստիարակների 2.8 (թվով 5 հաստիք) դրույքով թափուր աշխատատեղեր: Թափուր աշխատատեղերի համար նախատեսված վարձատրությունը որոշվել է ըստ ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակով: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերն անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՄՆ 25.03.2022թ-ի N471-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ մշակված հարցաշարերի: Հարցազրույցն անցկացվում է առանձին յուրաքանչյուր մասնակցի հետ:

Մրցույթին մասակցելու համար ներկայացնել՝

1. Դիմում /Ձև1/
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/
5. Ինքնակենսագրություն /Ձև4/
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Կրթության, Գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայք էջում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 07.04.2022թ-ից մինչև 04.05.2022թ. ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00- 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ս/թ. մայիսի 10-ին՝ ժամը 11:00 –ին, «Նոյակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ Արարտի մարզ, Արարատ համայնք, գյուղ Նոյակերտ, Նոյի 29:

Էլեկտրոնային հասցե noyakertimankapartez@mail.ru

Տեղեկությունների համար զանգահարել 093187869, 077292155 հեռախոսահամարներով: